



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ադրբեջանական ահաբեկչությունն ու Հայաստանի խաղաղարար առաքելությունը

Անցած շաբաթը ադրբեջանա-դարբադյան հակամարտության օրագրում արձանագրվեց՝ որպես սրընթաց զարգացումներով եւ քաղաքական տատանումներով հագեցած ժամանակահատված: 1994 թ. զինադադարից առ այս պահը՝ իրադարձությունների այս աստիճան արագընթաց զարգացում չէր եղել: Տեղի ունեցածը չէր կարող տեղավորվել «սահմանային լարված իրադրություն» ձեւակերպման մեջ: Այս անգամ թշնամու թիրախը ոչ թե սահմանին էր, այլ սահմանից այս կողմ: Թշնամին օգտագործեց հրթիռային եւ հրետանային զենք, որը նախատեսված է ոչ թե մեկ հոգու, այլ եւ կենդանի ուժի զանգվածային ոչնչացման համար:

Այս ամենն Ադրբեջանի իշխանությունների եւ հատկապես նախագահ Ալիեւի որդեգրած ահաբեկչական քաղաքականության շարունակությունն է: Չպետք է մոռանալ, որ Ալիեւը ի լուր աշխարհի բազմիցս բարձրաձայն հայտարարել է, թե համայն հայությունն Ադրբեջանի թիվ մեկ թշնամին է: Եվ այժմ նա գործնական քայլեր է կիրառում թշնամու նկատմամբ:

Ադրբեջանական բանակը կրակում է նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի խաղաղ բնակչության վրա: Մարդիկ սպանվում են իրենց տանը հայ լինելու եւ Հայաստանի քաղաքացի լինելու համար: Սա միջազգային ահաբեկչություն է, իսկ ահաբեկիչներին պետք է դատել ըստ կարգի:

Դատող եւ պատժող ուժը պետք է լինեն հայկական զինված ուժերը. այս անգամ այլեւս անիմաստ է սպասել միջազգային «խաղաղասերներին»: Այն անիմաստ է, եւ սրա մասին օրեր առաջ ակնարկել է նաեւ ՀՀ նախագահն իր ելույթում՝ «Նրանք գողվեցին, որովհետեւ մի ամբողջ աշխարհի չի կարողանում Ադրբեջանին հասկացնել...»:

Հակառակորդին դժվար է հասկացնել, նրան պետք է պատժել ամեն սխալ արարքի համար. դա ամենահասկանալի լեզուն է:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է միջազգային խաղաղապահ երկիր, եւ այսօր խաթարված է հենց իր խաղաղությունը:

ՀՀ նախագահը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանում հայտատարել է, որ Հայաստանի ներգրավվածությունը միջազգային խաղաղապահության ոլորտում աստիճանաբար ընդլայնվում է թե՛ աշխարհագրական, թե՛ քանակական եւ թե՛ որակական իմաստով: Հայաստանն այսօր արդեն միջազգային խաղաղապահության եւ անվտանգության ակտիվ ներդրող է հանդիսանում՝ կուտակելով զգալի փորձ անցած տասնամյակի ընթացքում:

Ուշագրավ է նաեւ նախագահի մեկ այլ հայտարարություն, որը լայն արձագանք է գտել Հայաստանից դուրս. Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անքակտելի մաս է: Սա ամենաբարձր մակարդակով հայտարարված ճշմարտություն է, ինչը գիտակցում է նաեւ հակառակորդ կողմը, որովհետեւ նրա արձակած զնդակից գոհվում են եւ Տավուշի մարզում, եւ Մարտակերտի շրջանում:

Մարտահրավերը նետված է, խնդիրը՝ պարզ: Այն, որ Արցախը Հայաստան է, մեզնից բացի աշխարհում ամենալավը գիտեն Ադրբեջանում եւ վերջին օրերի Ադրբեջանի գործողություններն աշխարհին եւս փաստում են այդ իրողությունը:



Կայացավ ԼՂՀ ԱԺ հերթական նիստը

Սեպտեմբերի 30-ին ԼՂՀ ԱԺ 6-րդ գումարման երկրորդ նստաշրջանի առաջին ընթերցմամբ քննարկման է ներկայացվել «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին ԼՂՀ օրենքի նախագիծը:

Օրենքի նախագիծն առաջարկում է բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից պարտապան գինծառայողների վարկերի եւ դեբյուտորական պարտքերի գծով հաշվեգրված եւ չվճարված տոկոսները, տույժերն ու տուգանքները կամ դրանց մի մասը զիջելու կամ ներելու դեպքում այդ գումարների չափով նվազեցնել հարկվող շահույթը: Գործող օրենսդրության համաձայն՝ բանկերը եւ վարկային կազմակերպությունները վարկերի նկատմամբ հաշվարկված տոկոսների տույժերի եւ տուգանքների զիջման կամ ներման դեպքում չստացված գումարների դիմաց կրում են շահութահարկի գծով պարտավորություն, ինչը խոչընդոտ է հանդիսանում վերջիններիս կողմից պարտապան անձանց նկատմամբ նման արտոնություններ կիրառելու:

Խոսքը 70-80 մլն ընդհանուր զիջման ենթակա պարտավորությունների մասին է:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, ողջունելով նախաձեռնությունը, հարց ուղղեց, թե նկատի առնելով երկրում տնտեսական վիճակը եւ սոցիալական տարբեր խավերի առկայությունը՝ արդյոք այս օրենքի ընդունումով տարբեր խավերի նկատմամբ հավասարության սկզբունքը չի խախտվի:

ԼՂՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արթուր Հարությունյանը պարզաբանեց, որ օրենքի ընդունումը ոչ թե պարտադրում է բանկերին նման արտոնություններ կիրառել, այլ կիրառելու դեպքում արտոնություններից օգտվել: Այսինքն, եթե բանկերի կողմից ցանկություն հայտնվի մնացած խավերին արտոնություններ սահմանելու, այսինքն զիջելու կամ ներելու, այդ դեպքում կարող է քննարկվել նաեւ մյուս խավերին արտոնություններ սահմանել:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը նշեց, որ երբ 1998թ. ԼՂՀ-ում կատարվել է հողի սեփականաշնորհում, սեփականաշնորհված հողի դիմաց գյուղացիները վճարում էին սոցվճարներ, որոնք ամրագրվում եւ համարվում էին համապատասխան աշխատանքային փորձ:

2004-ից կատարվեց օրենքի փոփոխություն, եւ մոցվեցին եկամտահարկն ու սոցվճարները:

Այս մտահոգությունն առկա է ԼՂՀ համարյա բոլոր գյուղական համայնքներում: Նա կառավարությանը հարց ուղղեց, թե արդյո՞ք քայլեր են ձեռնարկվում այս հարցին լուծում տալու համար:

Աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարար Սամվել Ավանեսյանը նշեց, որ հարցին լուծում կտրվի ընդհանուր բարեփոխումների շրջանակում:

«Դաշնակցություն» խմբակցության անդամ Ռիտա Մնացականյանն իր մտահոգությունը հայտնեց այն հարցի վերաբերյալ, որ Արցախի դպրոցներում առանձին չեն ուսումնասիրում Արցախի պատմությունն առարկան:

«Այսօր արցախցի աշակերտը տեղյակ չէ իր պատմությունից: Հնարավոր չէ՞ արդյոք գոնե շաբաթական մեկ դասաժամ հատկացնել Արցախի պատմություն դասավանդելու համար», - հարց ուղղեց Ռիտա Մնացականյանը:

Հարցին ի պատասխան՝ ԼՂՀ կրթության, գիտության եւ սպորտի նախարար Սլավա Ասրյանը պատասխանեց, որ, դպրոցներում առանձին թեմաներով ուսուցանվում է Արցախի պատմություն, սակայն չեն կարող զատել հայոց պատմությունն առարկայից՝ նաեւ հաշվի առնելով դպրոցական ծրագրի հագեցվածությունը:

ԼՂՀ պաշտպանության նախարար Լեւոն Մնացականյանը ԱԺ-ում: պատասխանելով սահմանային լարվածության վերաբերյալ հարցին, նշեց, որ Պաշտպանության բանակը վերահսկում է իրավիճակը եւ կատարում պատժիչ գործողություններ՝ ի պատասխան Ադրբեջանի ագրեսիայի: Արդյունքում՝ Ադրբեջանն ունի 11-12 գոհ, որոնց անունները ճշգրտված են ՊԲ կողմից, եւ մոտ 100-150 զոհ, որոնց անունները ճշգրտման փուլում են: Բացի դրանից, իրենց հոսպիտալներում այս պահի դրությամբ 60-80 վիրավոր կա: «Իմ տեղեկություններով՝ բացի մարդկային կորուստներից, ադրբեջանցիները կրել են նաեւ նյութական զգալի կորուստներ, քանի որ մի քանի հենակետեր եւ գորանցներ են ոչնչացվել մեր կողմից՝ իրենց զինտեխնիկայով հանդերձ: Կարծում եմ՝ ակնհայտ է, որ Տավուշի բնակիչների եւ ԼՂՀ զինվորների վրա հարձակումները Բաքուն չի մարտել», - ասաց Լ. Մնացականյանը:

Հայաստանը ԵՆԻՎ-ում Ուղղորդի գեկույցից լավ բան չի կարող սպասել

«Առաջին լրատվական»-ի գրուցակիցն էր ԱԺ ՀՀԴ խմբակցության ղեկավար, ԵՆԻՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամ Արմեն Ռուստամյանը:

- Պարոն Ռուստամյան, դուք Ստրասբուրգում եք, որտեղ ընթանում է Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի աշխատանքի նստաշրջանը: ԵՆԻՎ-ում քննարկվել է Բոլո Ուղղորդի հակահայկական գեկույցը: Հայկական պատվիրակությանն արդյո՞ք հաջողվել է հակափաստարկներ բերել, ընդդիմանալ՝ այնպես անել, որ հետաձգվի գեկույցի հրապարակումը:

- Նախ՝ գեկույցը, որպես այդպիսին, չի ներկայացվել: Չեկուցողը ներկայացրել է ընթացքի հետ կապված իր գնահատականները, եւ, բնականաբար, մենք նրան համապատասխան պատասխաններ ենք տվել, որովհետեւ փորձ էր անում մեղադրանք ներկայացնել հայկական կողմին, որ իբր խոչընդոտվում են իր այցելությունները: Մենք այդ մեղադրանքը չենք ընդունել, որովհետեւ դա չի համապատասխանում իրականությանը: Ասել ենք այն, ինչ ինքն էլ է նկատել. այն, որ հայկական հասարակության մեջ կա անվստահություն իր նկատմամբ. «Անկախ ձեր անձի նկատմամբ այդ անվստահությունից՝ մենք որեւէ խոչընդոտ չենք տեսնում: Ամեն մարդ էլ կարող է Հայաստան այցելել: Հայաստանը բաց երկիր է՝ ի տարբերություն հարեան երկրների, որոնք սեւ ցուցակների պրակտիկա ունեն: Բայց եթե դուք ուզում եք զբաղվել Ղարաբաղի հարցով, բնականաբար, պետք է համապատասխան պատշաճ կարգով դիմեք տեղի իշխանություններին եւ նրանց հետ պայմանավորվեք: Մեկը մյուսի հետ պետք չէ կապել: Դուք կարող եք գալ Հայաստան, բայց եթե Ղարաբաղ չգնաք, ձեր գեկույցը ոչ մի արժեք չի ունենա»:

Բացի դրանից՝ նա փորձում էր ներկայացնել, որ իբր ինքը մտահոգ է այն

իրավիճակով, որ այսօր գոյություն ունի սահմանին, եւ իր հիմնական նպատակը Եսկալացիան, լարվածությունը կանգնեցնելն է: Բայց մենք ասացինք, որ ճիշտ հակառակն է: Ես ասացի. «Շատ բան ձեզ վրա մի վերցրեք. դուք այն անձը չեք, որ Եսկալացիա դադարեցնեք: Ընդհակառակը՝ ամեն անգամ ձեր Բաքու գնալուց հետո ավելի է լարվածությունն ուժեղանում: Ոմանց պետք է, որ լարվածությունը մեծանա, որ ձեր գեկույցի անհրաժեշտությունը երեւա»:



Նա մեջբերումներ էր անում՝ ընտրովի հատվածներ, որոնք ձեռնառու են Ադրբեյջանին, բայց մենք ասացինք. «Բարի եղեք կատարել ավելի լիարժեք մեջբերում: Մասնավորապես՝ վերջին հայտարարությունը նկատի ունեցե՛ք, որտեղ հստակ ասվում է, որ հենց Ադրբեյջանը պետք է վերջապես ընդունի այն մեխանիզմը, որով առաջարկվում է վերահսկել հրադադարի խախտման դեպքերը: Եվ Ադրբեյջանը շարունակաբար մինչեւ հիմա անընդհատ հրաժարվում է այդ մեխանիզմները որդեգրել: Հայաստանը, հայկական կողմերը պատրաստ են դա հենց այսօր էլ իրականացնել: Եթե մտածում եք, որ դուք պետք է այդ մեխանիզմներն ամրապնդեք, գնացե՛ք, խոսե՛ք Ադրբեյջանի հետ, որովհետեւ

այդ կողմն է, որ մերժում է: Սրա մասին դուք երբեք չեք խոսել, մինչեւ հիմա լռել եք ընդհանրապես Եսկալացիայի մասին, որտեղ մարդիկ են զոհվում: Որպես գեկուցող՝ դուք մտածում եք ձեր այցի մասին: Մտածե՛ք, որ եթե ունեք հանգամանք, դա օգտագործեք հօգուտ այս գործընթացի, հօգուտ նրա, որ լարվածությունը մեղմվի. դրա հետ կապված՝ մատը մատին չեք տվել»: Այսպիսի սուր խոսակցություն է եղել նրա հետ: Բայց բնական է. նա խնդիր ունի՝ կապված

եւ կանխորոշում է գեկույցի բովանդակությունը («Բռնության Եսկալացիան Լեռնային Ղարաբաղում եւ գրավյալ այլ տարածքներում»): Բնականաբար, հենց այդպիսի ձեւակերպումով ու հաստատումներով գեկույցը չի կարող անաչառ լինել: Ես վստահ եմ, որ ընդհանրապես Եվրոպայի խորհուրդը՝ այսօրվա մթնոլորտով, բացարձակապես այն միջավայրը չէ, որտեղ հնարավոր է ակնկալել ինչ-որ նորմալ գեկույց: Ես վստահ եմ, որ հայկական կողմը չպետք է թույլ տա, որ պրիմիտիվ մեղադրանքներ իր վրա բերեն. հիմնականում դա են ուզում անել: Մնացած բոլոր առումներով մենք որեւէ լավ բան այդ գեկույցից չենք սպասել ու չենք էլ սպասում:

- Զե՞ք կարծում, որ ես մեկ անգամ պետք է ԵՆԻՎ ղեկավարությանը բացատրել, հիշեցնել ԵՆԻՎ շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցի քննարկման անկատարակահարմարության մասին:

- Մենք միշտ էլ այդ մասին ասել ենք, իրենք էլ են դա շատ լավ հասկանում, բայց իրենք իրենք հաճախ հակասում են: Ասում են, որ չենք ուզում անել մի բան, որը զուգահեռ է գնում Մինսկի խմբին կամ խանգարի Մինսկի խմբին, բայց ամեն ինչ անում են, որ ոչ միայն զուգահեռ գնա, այլ նաեւ խանգարի: Սա վկայում է այն մասին, որ իսկապես կան շահագրգիռ կողմեր՝ հանձնես ադրբեյջանա-թուրքական լոբբիսթի, որ այս ամեն ինչը պարզապես տանում է օգտագործելու համար այս կառույցը իրենց նպատակների ուղղությամբ: Եվրոպայի խորհուրդը չունի այդ մանդատը եւ չունի այդ հնարավորությունը ընդհանրապես կարգավորելու: Նրա դերը մարդասիրական պետք է լինի. փորձի երկու կողմերի միջեւ ձեւավորել վստահության մթնոլորտ, որի մասին միշտ ասել ենք, եւ պատրաստ ենք եղել այդպիսի ֆորմատներով աշխատել, բայց՝ ոչ ավելին:

«ԱՊՄԱՍԺ»

Մենք հակառակորդին կստիպենք հրաժարվել ուժի կիրառման մտադրությունից. Սեյրան Օհանյան



հայ-ադրբեյջանական պետական սահմանին եւ դարաբաղա-ադրբեյջանական ուժերի շփման գծում ստեղծված իրավիճակը:

Պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունից հայտնում են, որ Սեյրան Օհանյանը Նշել է, որ վերջին օրերին ադրբեյջանական կողմից իրադրության հետեւողական սրման, մեծ տրամազափի գինատեսակների, մասնավորապես հրետանու կիրառման, խաղաղ բնակավայրերի հրետակոծման պայմաններում ՀՀ զինված ուժերին եւ ԼՂՀ պաշտպանական բանակին այլ բան չի մնում, քան դիմելու ռազմական եւ ռազմաքաղաքական այնպիսի գործողությունների, որոնք հակառակորդին կստիպեն հրաժարվել ուժի կիրառման մտադրություններից, կթողափեն անպատժելիության ու սեփական գերազանցության պատրանքը եւ նրան կվերադարձնեն խաղաղ բանակցային սեղանի շուրջ:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մենք հակառակորդին կստիպենք հրաժարվել ուժի կիրառման մտադրություններից: Այս մասին սեպտեմբերի 30-ին, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի դեսպան Իվան Վոլինկինի հետ հանդիպման ժամանակ Նշել է Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Նա ներկայացրել է

ԵԱՀԿ Մինսկի խմբի քաղաքավարի լինելը ոչ մի ձեւով չի նպաստում իրավիճակի կայունացմանը

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետություններին պետք է մեղսակից համարել Ադրբեյջանի կողմից իրականացվող բռնությունների համար: Tert.am-ի հետ գրույցում այս մասին ասել է Հայ հեղափոխական Դաշնակցության Բյուրոյի անդամ, ՀՀԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի պատասխանատու Կիրո Մանոյանը՝ Նշելով, թե քաղաքավարի լինելը եւ, այսպես ասած, կեղծ հավասարության նշաններ դնելը ոչ մի ձեւով չի նպաստում իրավիճակի կայունացմանը:

«Անհրաժեշտ է, որ իրերը կոչվեն իրենց անունով եւ շատ հստակ քայլեր ձեռնարկվեն, այսինքն՝ ոչ միայն դատապարտվի գինադադարի խախտումը, իսկ Հայաստանի դեպքում՝ սահմանի գնդակոծումները, այլ պետք է համանախագահներից ակնկալել մի քայլ առաջ գնալ եւ ինչ-որ ձեւով հասկացնել Ադրբեյջանին, ավելի շփումներ ունենալով Լեռնային Ղարաբաղի իշխանություններին հետ՝ ցույց տալ Ադրբեյջանին, որ իր այս պահվածքն անհետեւանք չի մնա»,- ասել է Կիրո Մանոյանը: Ինչ վերաբերում է Ռուսաստանի պահվածքին ու արձագանքին՝ որպես ոչ միայն համանախագահող երկիր, այլ նաեւ որպես ռազմավարական դաշնակից, Կիրո Մանոյանն ասել է, որ պետք է զգույշ լինել, քանի որ հակառակ կողմից էլ կարող է առարկություն լինել, թե ռազմավարական գործընկերն ինչպե՞ս կարող է արդար միջնորդ լինել:

«Դրա համար էլ մեր ակնկալիքներն իրապաշտ եւ ճիշտ պետք է լինեն. չլինի այնպես, որ մենք հոնքը սարքելու փոխարեն աչքը հանենք: Ծիշտ է, մենք ակնկալիքներ ունենք Ռուսաստանից, բայց կարծում եմ, որ պետք չէ պատկերացնել, թե դրանք կլինեն ինչ-որ ձեւական բաներ, այլ շատ իրական աջակցություն, որը, կարծում եմ, արդեն տրամադրվում է», - Նշել է Կիրո Մանոյանը:

Tert.am

Լեռնային Ղարաբաղի խռովահույզ օրերը

(Հատված Ստեփանակերտ քաղաքի բնակիչ Սեդա Սարինյանի օրագրից)

Արցախյան շարժման տարիներին Սեդա Սարինյանը եղել է «Սովետական Ղարաբաղ» թերթի սրբագրիչը: Նա դուստրն է Գոհար Սարինյանի, ով եղել է Ղարաբաղի հարցով Մոսկվա մեկնած առաջին պատվիրակության անդամներից մեկը: Արցախյան շարժման առաջին իսկ օրերից Սեդան գրիչ է վերցրել եւ մինչեւ 1996թ. ամեն օր գրի առել Ղարաբաղում կատարվող իրադարձությունները:

«...Իրականություն է դառնում հայ ժողովրդի դարավոր երազանքը: Այսօր՝ սեպտեմբերի 21-ին, Հայաստանի հանրապետի օրն է, իսկ ավելի ճիշտ՝ ազատության եւ անկախության օրը: Դարեր շարունակ հայ ժողովուրդը երազել է այս օրը: Ոմանք կարծում են, թե Հայաստանը մեզ մեն-մենակ է թողնում: Սակայն, Հայաստանը, կայսրության կազմում Նախկին գաղութը մնալով, արցախցիներին հոգսը չի թեթեւանա: Հայաստանը թույլ չի տա, որ Ադրբեջանը Արցախյան հարցը լուծի ադրբեջանավարի: Հայաստանի հանրապետություն է նաեւ Արցախի ճակատագիրը: 1991թ. սեպտեմբերը կարելի է անվանել առկայծող հույսի ժամանակ: Ինչե՞ր չտեսանք... «Կոլցո» ֆաշիստական գործողությունը, որը համընկավ Պոլյանիչկոյի աստեղային ժամի հետ, Գետաշենի, Մարտունաշենի, Բերդաձորի, Շահումյանի, Հադրութի շրջանների հազարավոր խաղաղ բնակիչների անմարդկային բռնատեղահանում, ցուցակներով կատարվող գանգվածային ձերբակալություններ, շրջափակում, պատերազմ: Թվում էր, թե այդ կարմրադարչնագույն մոծավանջը վերջ չի ունենալու: Սակայն մենք դիմացել ենք, գոյատևել: Ոչ միայն այն պատճառով, որ քաջություն ենք դրսևորել, այլև նրա համար, որ մեզ հետ են եղել ամբողջ աշխարհի ազնիվ մարդիկ: Նրանք ճեղքել են լրատվական շրջափակումը, նրանք կանգնեցրել են տանկերը, նրանք թույլ չեն տվել, որ սեղմվի օդակը Արցախի կոկորդիս: Եվ առկայծել է հույսը՝ վեր հանելով մոխրից:

Սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտում պատրաստվում են դիմավորել Ելցինին ու Նազարբաեին: Մեքենաների շարքը, դուրս գալով օդանավակայանից,

ուղղվում է դեպի Ստեփանակերտ: Բազմաթիվ պլակատներով, քաղաքի ներքեւից մինչեւ կենտրոնական իրապարակ, հյուրերին ողջունում են ստեփանակերտցիները:

Պլակատների վրա գրված են՝ «Ղարաբաղը ողջունում է Ելցինին եւ Նազարբաեին», «Պահանջում ենք ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը», «1813թ. պայմանագիրը գործողության մեջ», «Պատասխանատվության ենթարկել Պոլյանիչկոյին», «Ադրբեջանական օմոնականներ՝ դուրս Ղարաբաղից» եւ այլն: Ժողովուրդը վանկարկում է՝ Ելցին, Նազարբաե: Ավտոմեքենաներից իջնելով՝ Ելցինն ու Նազարբաեը ողջունեցին ժողովրդին:

Հյուրերը պիտի մտնեին ԼՂՀ խորհրդի



գործկոմի շենքը: Մութալիբովը բողոքում է, որ շենքի վրա ծածանվում են Հայաստանի, Ռուսաստանի եւ Ղազախստանի դրոշները եւ հյուրերին տանում է Նախկին մարզկոմի շենքը: Տեղական լրագրողներին թույլ չտվեցին մտնել շենք:

Անորոշ դրություն է: Մարդիկ անհանգիստ են՝ ի՞նչ է կատարվում: Սակայն շատ չանցած՝ ԼՂՀ խորհրդի գործկոմի շենք են մտնում Ելցինն ու Նազարբաեը: Չրույցին մասնակցում են պատգամավորներ, հանրապետության ղեկավար աշխատողներ: Մանուչարովը պահանջեց, որ բանակցություններին չմասնակցի Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Կարաբեյը: Բոլորը սպասում էին, որ նա դուրս կգա, բայց նա մինչեւ վերջ նստեց: Թե այնտեղ ինչ տեղի ունեցավ, պատմեցին Հ. Պողոսյանը եւ Վ. Գաբրիելյանը: Մերոնք ասացին, որ ոչ մի երկխոսության չեն գնա, քանի դեռ ոտնահարվում են մարդու իրավունքները, պահանջեցին ՄԱԿ-ից փորձագետներ հրավիրել: Երկու նախագահներն էլ համաձայնվեցին այդ առաջարկությանը: Բարձրացրած համարյա բոլոր հարցերն էլ ընդունվեցին: Դրանք էին՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, սահմանադրական իշխանությունների վերականգնումը, շրջափակման վերացումը, զինված կազմավորումների դուրս բերումը: Երկուսն էլ խոստացան իրենցից կախված ամեն ինչ անել այդ հարցերի լուծման համար: Նիստերի դադարում նախագահները հանդիպում ունեցան ակտիվի հետ: Հիմնական խտոռը Մանուչարովն էր: Ակտիվի հետ

նր եւ Վ. Գաբրիելյանը: Մերոնք ասացին, որ ոչ մի երկխոսության չեն գնա, քանի դեռ ոտնահարվում են մարդու իրավունքները, պահանջեցին ՄԱԿ-ից փորձագետներ հրավիրել: Երկու նախագահներն էլ համաձայնվեցին այդ առաջարկությանը: Բարձրացրած համարյա բոլոր հարցերն էլ ընդունվեցին: Դրանք էին՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, սահմանադրական իշխանությունների վերականգնումը, շրջափակման վերացումը, զինված կազմավորումների դուրս բերումը: Երկուսն էլ խոստացան իրենցից կախված ամեն ինչ անել այդ հարցերի լուծման համար: Նիստերի դադարում նախագահները հանդիպում ունեցան ակտիվի հետ: Հիմնական խտոռը Մանուչարովն էր: Ակտիվի հետ

նր: Մեր ամենակարեւոր խնդիրն է՝ դադարեցնել արյունահեղությունը, սկսել հաշտության գործընթացը»:

Այնուհետեւ Ելույթ ունեցավ Նազարբաեը: Նա ասաց, որ իրենք հասկանում են, թե ինչ պատասխանատվություն են վերցրել իրենց վրա եւ ինչ հույսեր ենք կապում մենք իրենց հետ: «Դե, ուրեմն, օգնեք մեզ»,- ամփոփելով իր խոսքը՝ ժողովրդին դիմեց նա: Ելույթ ունենալուց հետո հյուրերն անմիջապես նստեցին ավտոմեքենաները եւ մեկնեցին օդանավակայան: Հանրահավաքը շարունակվեց: Իսկ Ելցինն ու Նազարբաեը եղան նաեւ Երեւանում ու Բաքվում: Այնուհետեւ պիտի հանդիպում լինի ժելեզնափոսկում. հանդիպում, որը կարող է դառնալ պատմական:

Պետք է ասել, որ Ադրբեջանի ղեկավարությունը մեծ տհաճությամբ ընդունեց Ելցինի եւ Նազարբաեի խաղաղասիրական նախաձեռնությունը:

Ելցինի եւ Նազարբաեի՝ Ղարաբաղում գտնվելու օրը մինչեւ ատամները զինված ադրբեջանական օմոնը եւ գրոհայինները հարձակում գործեցին Մարտակերտի շրջանի Չափար գյուղի վրա: Տարբեր կետերից հրե օդակի մեջ առան հայկական բնակավայրը: Հրոսակները սպանեցին հինգ հոգու, խոշտանգեցին նրանց դիակները:

Սեպտեմբերի 23-ին ժելեզնափոսկում կայացավ կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերի՝ Ադրբեջանի, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին կոնֆլիկտի փուլ առ փուլ կարգավորման հարցերը: Արցախի ներկայացուցիչները միայն լսողի դերում էին (ԼՂՀ գործկոմի նախագահ Պետրոսյան, Ռոբերտ Զոչարյան եւ Շահումյանի շրջագործկոմի նախագահի տեղակալ Ռուկանյան):

Եղել է առաջարկ, որ փաստաթուղթը ստորագրեն Պետրոսյանն ու Ջաֆարովը, քանզի իբր ադրբեջանական համայնքը չի ճանաչում ԼՂՀ-ն, բայց չէ որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն էլ չի ճանաչում Ադրբեջանի իշխանությունը, եւ, հետեւաբար, Մութալիբովի ստորագրության կողքին պետք է լինի նաեւ Պետրոսյանի ստորագրությունը...»

Շարունակելի

Փոխվարչապետն ընդունել է ՀՕՍ-ի մի խումբ ներկայացուցիչների

Արցախի Հանրապետության փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը սեպտեմբերի 29-ին ընդունել է Հայ օգնության միության Կանադայի շրջանի վարչության մի շարք անդամների՝ ատենապետ Արմինե Գարապետյանի գլխավորությամբ:

Փոխվարչապետն իր խոսքում ընդգծել է սփյուռքի նշանակալի դերակատարումն Արցախի զարգացման գործում: Նա անդրադարձել է հանրապետությունում իրականացվող ժողովրդագրական քաղաքականությանը՝ շեշտադրելով նաեւ սփյուռքահայության մասնակցության կարեւորությունը: Ա. Աղաբեկյանը հակիրճ ներկայացրել է տնտեսական ընթացիկ ծրագրերը եւ առաջիկա նախագծերը՝ կոչ անելով ներկաներին դառնալ ԱՀ կառավարու-

թյան խոսնակներն իրենց երկրներում: Փոխվարչապետն անդրադարձել է



նաեւ Արցախում ՀՕՍ-ի գործունեությանը եւ ընթացիկ ծրագրերից կարեւորել 8 մանկապարտեզների ֆի-

նանսավորումը: Նրա խոսքով՝ ՀՕՍ-ի նորընտիր վարչությունը պետք է հաս-

կանա մանկապարտեզների կառուցման եւ ֆինանսավորման կարեւորությունը, որոնք պետք է շարունակական

բնույթ կրեն:

«Ստեփանակերտում կառուցվող մանկապարտեզի նոր մասնաշենքը, որը նախատեսված է 130 երեխայի համար, առաջինն է լինելու, որն ունենալու է ռմբապատարան, եւ յուրաքանչյուր ՀՕՍ-ուհի համացանցի միջոցով մասնակցի է լինելու մանկապարտեզի աշխատանքներին»,- ասել է փոխվարչապետը՝ հավելելով, որ նախատեսվում է շենքի շինարարությունն ավարտել 2016 թվականին:

Հանդիպման վերջում Ա. Աղաբեկյանը պատասխանել է հյուրերի բազմաթույթ հարցերին՝ հորդորելով ակտիվ մասնակցություն ունենալ Արցախի զարգացման գործում:

Սեպ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արցախը հայի իրավատեր լինելու համոզմունքն է. Սեւակ Պողոսյան



«Երբեմն Արցախում փնտրում եմ Սիրիան, մարդկանց մեջ փորձում եմ գտնել հարազատ դեմքեր՝ հուսալով, որ գոնե այդպես կառնեմ կարոտս: Բայց փնտրում եմ նաեւ Ամբողջական Հայաստանը, որին հոր սիրով եմ սիրում: Եվ գիտեմ, որ փնտրածս երազանքը կարող է իրականություն դառնալ միայն այն դեպքում, երբ Հայաստանն ու Արցախը լինեն հզոր: Երբ ամեն հայ իր ներդրումն ունենա հզոր հայրենիքի կերտման գործում»,- ասում է Սիրիայից Արցախ տեղափոխված Սեւակ Պողոսյանը:

ունեցավ արժանավայել ապրելու, վաճելու իր աշխատանքի վաստակը»,- նշում է Սեւակը: Պապերի երկիրը տեսնելու եւ ընտանիքի հետքերով գնալու նպատակով Սեւակը հորեղբոր հետ այցելել էր Արեւտյան Հայաստան:

«Գիտես, որ այդ հողերը քո սեփականությունն են եւ դրանից իրավագրված ես: Այդ զգացումն է, որ մարդու մեջ արթնացնում է վրեժխնդրություն եւ պահանջատիրություն, ինչն ավելի շատ է կապում քեզ քո հայրենիքին: Հայրենիքը ուժ եւ համբերություն է տալիս մեզ,- ասում է Սեւակը,- մինչեւ Սիրիայում իրավիճակի սրումը մտածել եմ հայրենիք տեղափոխվելու մասին: Իմ մեջ միշտ արթուն էր դեպի Հայաստան կանչը»: Մանկության հիշողություններում տպավորված է տան պատից կախված Արարատ լեռան նկարը: Այդ նկարը միշտ նրանց աչքերի առջև էր: Ծնողների դաստիարակությունը եւ ավարտ չունեցող խոսակցությունները հայրենիքի, պապերի մասին՝ անդադար էին:

«Ազգայինի նկատմամբ սերը միշտ վառ էր մեր օջախում, որը հորդորում եւ ստիպում է՝ միշտ կառչած մնալ քո իրավունքին, պահանջատիրությանը եւ հայրենիքին: Չասված, չարտահայտված զգացմունքներս, տարիներով պահած սիրո նշույլը բերեց ինձ Արցախ...»: 2001 թվականին ՀՀ Դաշնակցությունը Հայաստանում կազմակերպել էր «Դեպի երկիրը՝ կարգախոսի եւ իրագործման միջեւ» խորագրով երիտասարդական խորհր-

դրդապատճառներից մեկը: «Ինձ համար տարբերություն չունեն Հայաստանում կամ Արցախում հաստատվելը: Բայց Արցախը յուրահատուկ է: Արցախն ու Արցախի ժողովուրդն ինձ համար հարգանքի մեծ բաժին ունեն... Արցախը հայի իրավագրվածության հակառակ պոռթկումն է, իրավատեր լինելու համոզմունքը: Հաղթական լինելու ներշնչողն է: Բարիության, ուժի, արդարության եւ իրավատերի զգացումը, հոգեկան բարոյականության գագաթնակետն է Արցախը...»,- ասում է Սեւակը:

Մինչ Սիրիայի դեպքերն էր Սեւակը որոշել տեղափոխվել հայրենիք: 2011 թվականին ամուսնացել եւ հաստատվել է Արցախում: Սեւակն ու Հասմիկն այսօր ապրում են Շուշիում: «Շուշիում տուն ունենալը մեզ համար մեծ ուրախություն էր, որ վերջապես մեր օջախն ունեցանք,- պատմում է Սեւակը,- Շուշին երբեմն տխուր է, երբեմն էլ շատ ուժեղ... Ուզում եմ տեսնել Շուշին ծաղկուն, եւ այդ գործում յուրաքանչյուրս պետք է մեր ներդրումն ունենանք: Դեռ 2005-ին, երբ առաջին անգամ այցելեցի

Փառք Աստծո, այսօր ունեւք Ազատ, Անկախ Հայաստան եւ Արցախ: Այդ գաղափարը մեզ համար երազանք էր, ինչն իրականություն դարձավ: Ինչո՞ւ այսօր այդ իրականությունը չվայելեց, ինչո՞ւ գրկեց մեր գավակներին հայրենիքում մեծանալու հնարավորությունից»: Սեւակի հայրը՝ Անդրանիկ Պողոսյանը, մինչ օրս Սիրիայում է, եւ Հայկազի Կրթասիրաց մշակութային միության «Ս.Չեմբերջյան» երկրորդական վարժարանի տնօրենն է: Անդրանիկ Պողոսյանը երկու անգամ այցելել է Արցախ: «Սիրիա վերադարձավ՝ ինձ ու որդուս ասելով, որ Արցախում մեկ թոռնիկ ու գավակ ունեմ, իսկ Հայկազում 500. չեմ կարող թողնել իրենց... Այս խոսքերը հորս՝ Հայկազ վերադառնալու հիմնական պատճառը եղան,- պատմում է Սեւակը,- ես էի կարող արգելք դառնալ, միայն մաղթեցի հաջողություն...»:

Այսօր Հայկազում, այդ դժվար ու վտանգավոր պայմաններով հանդերձ, ազգային դպրոցները շարունակում են գործել՝ հույսի նշույլներ տալով Սիրիայում ապրող հայերին: «Սիրիայում մսա-



Շուշի, զգացի հպարտության եւ հաղթական լինելու զգացումը: Չկարողացա իմ զգացմունքներն ու հույզերը պահել: Շուշին միշտ կմնա իր հզորության եւ գեղեցկության մեջ: Իսկ ժողովուրդը, հուսամ, կկարողանա ապրել արժանավայել»: Սեւակն ու Հասմիկը մեկ գավակ ունեն՝ Անդրանիկը: Սեւաչյա փոքրիկ Անդրանիկը հաճախում է մանկապարտեզ: Իր եւ ընտանիքի ապագան Սեւակը տեսնում է հայրենիքում: «Որդուս համար առանցքը հայրենիքն է. ուր որ էլ փորձի գնալ, բախտավորվել եւ հաջողության հասնել՝ ուժ տվողը, մեկ է, հայրենիքն է: Ի վերջո, ամեն մի հայի ապագան հայրենիքում է: Պետք է արժեքները կարողանաս ծառայեցնել հայրենիքիդ եւ հզորացնել այն»,- մեծ համոզմունքով ասում է Սեւակը:

ցողների տարած աշխատանքը հերոսական եւ շատ դժվար որոշում է: Աստված թող իր աջը նրանց վրա պահի: Այսօր դժվար է հայկական գաղութը թողնել եւ գնալ այնտեղից: Այդ գաղութը քրտինք պահանջելով է ստեղծվել, բայց կա իրականություն, որ պետք չէ մոռանալ: Ինչքան էլ որպես հայ ապրում ես Սփյուռքում, ինչքան էլ հայրենիքից հեռու ես, այնքան մատնված ես ձուլման վտանգին եւ քո առջեւ ծառայած տարբեր դժվարություններին... Ժամանակին մենք ունենիք այնտեղ կալվածքներ, հողատարածքներ, որոնք այսօր արդեն ոչ իշխանական ուժերի ձեռքերում են, բայց մենք, ստեղծելով դրանք, միշտ ունենիք մեր հայրենիքը անկախ տեսնելու երազանքը: Ապրել ենք այն հույսով, որ մի օր պետք է տեղափոխվենք Հայրենիք եւ կերտենք մեր ապագան Հայաստանում...»,- ասում է նա: Սեւակն ունի երկու եղբայր: Մինչեւ Սիրիայի պատերազմը սկսելը՝ երեք եղբայրներն էլ աշխատանքի բերումով հաստատվեցին տարբեր երկրներում, սակայն ամեն ամառ նրանք հավաքվում են հայրենիքում: Սեւակն արդեն հայրենիքում է եւ հավատում է իր եղբայրների ու իր նման շատ-շատերի վերադարձին, որովհետեւ ամեն մի վերադարձ ճանապարհի է հարթում դեպի այն Հայրենիք, որը դեռ պիտի գա...



քաղաքում: «Շատ հայերի համար Սիրիան դարձել է եւ՝ ծննդավայր, եւ՝ հայրենիք՝ այն իմաստով, որ ցեղասպանությունից փրկված հայերին սիրիացիներն ընդունեցին եւ ապաստան տվեցին: Հայն այնտեղ հնարավորություն

դաժողով, որտեղ Սեւակը ծանոթացել է Արցախի ՀՀ Երիտասարդականից մասնակից Հասմիկ Ծինոյանի հետ: Հանդիպումը եղավ ճակատագրական եւ հետագայում հանդիսացավ Սեւակի՝ հայրենիքում հաստատվելու հիմնական

